

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ երիտասարդներ, հարգելի՛ գործընկերներ,

Ինչպես ամբողջ աշխարհում, մեր երկրում ևս երիտասարդությունը հասարակության ամենաակտիվ, ամենախանդավառ, ամենահամարձակ ու նորարար հատվածն է: Ուրեմն և նրա երազանքներով, արարմամբ ու պայքարով է նաև կերտվում մեր երկրի ու մարդկության ներկան ու ապագան:

Սիրելի՛ երիտասարդներ, դուք ապրում եք չափազանց դինամիկ ու հետաքրքիր, մեր երկրի և մարդկության առջև ծառայած բազմաթիվ ու բազմազան մարտահրավերներով ու հիմնախնդիրներով հարուստ ժամանակաշրջանում, ինչը մի կողմից բազմապատկում է ձեր պատասխանատվությունը, մյուս կողմից՝ գործունեության լայն ասպարեզ բացում ձեր առջև:

Շնորհավորելով երիտասարդության միջազգային օրվա առիթով՝ մաղթում եմ ձեզ անսահման եռանդ, գիտելիքների շարունակաբար հարստացող գանձարան և աննկուն կամք՝ իրականացնելու ձեր կայացմանը, պետության հզորացմանն ու բարօրությանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը, խաղաղությանը հաստատմանը և միջազգային համագործակցությանը միտված ձեր գաղափարներն ու ծրագրերը՝ հավաստիացնելով, որ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հիմնական նպատակը ձեր լավագույն ծրագրերի ու գաղափարների կենսագործմանն աջակցելն է:

12.08.2014 թ.